«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 7
17.02.2022թ.

1. ՀԱՍՀ շրջանավարտների զբաղվածության տվյալների վերլուծության և խնդիրների վերաբերյալ.

1.1. Ընդունել ի գիտություն:

1.2. Հանձնարարել կարիերայի զարգացման և շարունակական կրթության բաժնին.

- կանոնավոր կերևպով իրականացնել հարցումներ շրջանավարտ¬ների շրջանում՝ ներգրավվելով ավելի մեծ թվով ուսանողներ, օգտա¬գործել թվային հարթակների, սոց. ցանցերի հնարավորությունները,

- հարցում կատարել գործատուների շրջանում, պարզել նրանց անհրաժեշտ գիտելիքի, հմտությունների և կարողությունների շրջանակը, համալսարանի թերացումները, կատարել փոփոխություններ կրթական ծագրերի ուսումնական պլաններում, առարկայական ծրագրերում, դասավանդման մեթոդներում,

- հեռակա ուսուցման դեպարտամենտի հետ համագործակցելով հարցումներ իրականացնել նաև հեռակա ուսուցման դեպարտամենտի շրջանավարտների շրջանում:

1.3. Հանձնարարել պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի դեկանի պարտականությունները կատարող Ս. Դավեյանին , ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի դեկան Ա. Սիմոնյանին կազմակերպել AutoCAD, Sivil 3D, SOLIDWORKS ծրագրերի անվճար դասընթացներ ուսանողների համար:

1.4. Հանձնարարել ՈԳԱ կենտրոնի տնօրեն Լ. Զաքարյանին մեկամսյա ժամկետում կազմակերպել քննարկում.

- ուսումնական պլաններում և առարկայական ծրագրերում կուրսային աշխատանքների կամ նախագծերի ներառման նպատակահարմարության վերաբերյալ,

- քիմիա առարկայի դասաժամերի ավելացման նպատակահարմարության վերաբերյալ:

2. Ագրոնոմիական ֆակուլտետի ամբիոններում ուսումնական գործընթացի կազմակերպման վիճակի և առկա խնդիրների վերաբերյալ.

2.1. Ընդունել ի գիտություն:

2.2. Հանձնարարել ագրոնոմիական ֆակուլտետի դեկան Ա. Տեր-Գրիգորյանին.

- համալսարանի ենթակառուցվածքների հնարավորությունները, նորագույն տեխնոլոգիաներն օգտագործել ուսումնական գործընթացում, ինչպես նաև

տնտեսություններում իրականացվող աշխատանքներում ներգրավվել ուսանողներին ու աշխատակիցներին,

- մեկամսյա ժամկետում մշակել ֆակուլտետի ենթակառուցվածքների և լաբորատորիաների առևտրայնացման աշխատանքային պլան:

3. **Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման Ենթակառուցվածքների պահպանում ու զարգացում 2023 թ. ծրագրերի պետական բյուջեից ֆինանսավորում ստանալու հայտերի վերաբերյալ.**

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը միաձայն որոշեց հաստատել Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման Ենթակառուցվածքների պահպանում ու զարգացում 2023 թ. ծրագրերի պետական բյուջեից ֆինանսավորում ստանալու հայտերը և երաշխավորել ՀՀ գիտության կոմիտե ներկայացնելու համար.

- Ագրոկենսատեխնոլոգիայի ԳԿ մասնաճյուղ,
- Ոսկեհատի խաղողագինեգործության ԳԿ մասնաճյուղ,
- Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի եվ մելիորացիայի ԳԿ մասնաճյուղ,
- Գյուղատնտեսության մեքենայացման եվ ավտոմատացման գիտահետազոտական ինստիտուտ,
- Սննդագիտության և կենսատեխնոլոգիաների գիտահետազոտական ինստիտուտ,
- Գյուղատնտեսական կենդանիների սելեկցիայի, գենետիկայի եվ կերակրման հետազոտական կենտրոն,
- Անասանաբուժության և անասնաբուժական սանիտարական փորձաքննության հետազոտական կենտրոն,

Ագրարային քաղաքականության եվ տնտեսագիտության հետազոտական կենտրոն:

4. ՀԱԱՀ տվյալագիտության ամբիոնի հայցորդ Աստղիկ Մովսեսի Մովսիսյանի «Մանկամահացության սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրները և իրավիճակի վիճակագրական վերլուծությունը (ՀՀ տվյալներով)» անվանումով, Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» (նախկինում՝ Ը.00.05 «Հաշվապահական հաշվառում և աուդիտ») մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը՝ հրապարակային պաշտպանության երաշխավորելու վերաբերյալ.

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը միաձայն որոշեց ՀԱԱՀ տվյալագիտության ամբիոնի հայցորդ Աստղիկ Մովսեսի Մովսիսյանի «Մանկամահացության սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրները և իրավիճակի վիճակագրական վերլուծությունը (ՀՀ տվյալներով)» անվանումով, Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» (նախկինում՝ Ը.00.05 «Հաշվապահական հաշվառում և աուդիտ») մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ